ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/49-2022

2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-ԻՆ՝ ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՄԱԿ-Ի «ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՈՒ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Խորհրդի անդամներ

Հ. Մաթևոսյան	Փոխվարչապետ, Խորհրդի նախագահ
Հ. Սիմիդյան	Շրջակա միջավայրի նախարար, Խորհրդի նախագահի տեղակալ
Գ. Գաբրիելյան	Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ
Վ. Գևորգյան	Արտաքին գործերի նախարարի տեղակալ
Վ. Տերտերյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Ե. Թումանյանց	Արդարադատության նախարարի տեղակալ
Ա. Հայրապետյան	Ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Իսպիրյան	Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Ջումայան	Առողջապահության նախարարի տեղակալ
Ա. Գուգարաց	Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ
Ն. Պետրոսյան	Քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ
Ն. Բաղդասարյան	Վիճակագրական կոմիտեի վիճակագրության պետական խորհրդի անդամ
Ս. Պողոսեան	Զբոսաշրջության կոմիտեի նախագահ
Ն. Նացվլիշվիլի	Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչ

Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակիցներ

Դ. Մորան	Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում, Թուրքիայում և Իրանում Կլիմայի փոփոխության համաժողովի՝ COP26-ի հարցերով տարածաշրջանային դեսպան
Ջ. Գալագեր	Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպան
Ա.Դավթյան	Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանատան Առևտրի և զարգացման հարցերով պատասխանատու
Ս. Մեստրոնի	Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցչի տեղակալ
Ա. Գասպարյան	Փոխվարչապետի խորհրդական
Լ. Մարտիրոսյան	Փոխվարչապետի մամուլի քարտուղար
Շ. Կոստանյան	Փոխվարչապետի օգնական
Վ. Շիրվանյան	Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցչության Կլիմայի փոփոխության ծրագրի ղեկավար
Դ. Հարությունյան	Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Կլիմայի փոփոխության ծրագրի ղեկավար
Ն. Բուդոյան	Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ
Մ. Սարիբեկյան	Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Ա. Մուսախանյան	Անվտանգության խորհրդի քարտուղարի օգնական
Հ. Հակոբյան	Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի փորձագետ
Վ. Մելիքյան	Ասիական զարգացման բանկի փորձագետ
Դ. Մանուկյան	Ասիական զարգացման բանկի փորձագետ

Օրակարգի հաստատում

ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի, Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի և Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում, Թուրքիայում և Իրանում Կլիմայի փոփոխության համաժողովի՝ COP26-ի հարցերով տարածաշրջանային դեսպան Դեյվիդ Մորանի բացման խոսքից հետո Խորհրդի նախագահի առաջարկությամբ միաձայն հաստատվեց Խորհրդի նիստի օրակարգը:

Օրակարգային հարցերի քննարկում

1. **Կոնվենցիայի ներքո միջազգային աջակցության շրջանակներում ընթացող գործընթացների և ծրագրերի վերաբերյալ**

Զեկուցող՝ *Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Գայանե Գաբրիելյան*

Ընդունվեց ի գիտություն.

1) Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Գայանե Գաբրիելյանի ներկայացրած տեղեկատվությունը՝ Կոնվենցիայի ներքո միջազգային աջակցության շրջանակներում և Փարիզյան համաձայնագրի ներքո ՀՀ ստանձնած պարտավորությունների և Ազգային մակարդակով սահմանված գործողությունների իրականացման համատեքստում ընթացող գործընթացների և ծրագրերի վերաբերյալ:
2) «Կլիմայի մասին» օրենքի մշակման կարևորությունը՝ պայմանավորված երկրում կլիմայական քաղաքականության մշակման և իրականացման իրավական և ինստիտուցիոնալ շրջանակի սահմանման անհրաժեշտությամբ:
3) Մշակման փուլում գտնվող՝ ՀՀ երկարաժամկետ ցածր արտանետումներով զարգացման ռազմավարության կարևորությունը՝ պայմանավորված ինչպես դրա՝ կլիմայի փոփոխության մեղմման գործողությունների, այնպես էլ երկարաժամկետ տնտեսական և սոցիալական զարգացման նպատակների սպասարկմամբ:
4) Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների, ինչպես նաև «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո գործող կլիմայական հիմնադրամների

աջակցությամբ և Շրջակա միջավայրի նախարարության համակարգմամբ իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը:

2. **Կլիմայի փոփոխության հարմարվողականության նկատառումները ֆիսկալ որոշումների կայացման գործընթացում ինտեգրելու վերաբերյալ**

Զեկուցող՝ *Ֆինանսների նախարարի տեղակալ Արմեն Հայրապետյան, Ասիական զարգացման բանկի փորձագետ Դավիթ Մանուկյան*

Ընդունվեց ի գիտություն Կլիմայի փոփոխության հարմարվողականության նկատառումները ֆիսկալ որոշումների կայացման գործընթացում ինտեգրելու անհրաժեշտությունը: Այս առումով հավասարապես կարևորվեց այդ գործընթացի երկու բաղադրիչների նշանակությունը, այն է՝ կլիմայական ռիսկերի հաշվի առնմամբ ֆիսկալ որոշումների կայացման ազգային համակարգերի ուժեղացումն ու կլիմայական ռիսկերի հաշվի առնմամբ որոշումների կայացման մասին գիտելիքների բարելավումը:

3. **«Փարիզի համաձայնագրի ներքո Հայաստանի թափանցիկության ազգային շրջանակի կառուցումը» ծրագրի վերաբերյալ**

Զեկուցող՝ *ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Դիանա Հարությունյան*

Ընդունվեց ի գիտություն Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Կլիմայի փոփոխության ծրագրի ղեկավար Դիանա Հարությունյանի ներկայացրած տեղեկատվությունը «Փարիզի համաձայնագրի ներքո Հայաստանի թափանցիկության ազգային շրջանակի կառուցումը» ծրագրի նպատակի, բաղադրիչների և ընթացքի վերաբերյալ. ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհուրդը հանդիսանում է նաև վերոնշյալ ծրագրի կառավարման խորհուրդը:

4. **Ազգային մակարդակով սահմանված գործողությունների գործընկերության և հետագա համագործակցության հնարավորությունների վերաբերյալ**

Զեկուցող՝ *Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ Նոնա Բուդոյան*

Ընդունվեց ի գիտություն Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ Նոնա Բուդոյանի ներկայացրած տեղեկատվությունն Ազգային մակարդակով սահմանված գործողությունների գործընկերության (այսուհետ՝ Գործընկերություն), Գործընկերության պլանի և վերջինիս ընձեռած համագործակցության հնարավորությունների վերաբերյալ:

5. **Հայաստանում կլիմայի փոփոխության և դեռահասների մասնակցության վերաբերյալ «Գիտելիքի, վերաբերմունքի, փորձառության և վարքագծի» հետազոտության վերաբերյալ**

Զեկուցող՝ *ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի կլիմայի փոփոխության ծրագրի ղեկավար Վիգեն Շիրվանյան*

Ընդունվեցին ի գիտություն «Գիտելիքի, վերաբերմունքի, փորձառության և վարքագծի» վերաբերյալ հետազոտության արդյունքները, որի նպատակն էր եռաստիճան մոտեցման (ազդեցություն, վերաբերմունք, հակազդեցության պատրաստակամություն) կիրառմամբ բացահայտել Կլիմայի փոփոխության ընկալումները խոշորացված համայնքներում:

6. **Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմերի 27-րդ հանդիպմանն ընդառաջ նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ**

Զեկուցող՝ *Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Գայանե Գաբրիելյան*

1) Ընդունվեց ի գիտություն Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Գայանե Գաբրիելյանի ներկայացրած տեղեկատվությունը՝ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի կողմերի 27-րդ հանդիպման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ: Խորհրդի անդամներին տրամադրվեց տեղեկատվություն Շրջակա միջավայրի նախարարի փետրվարի 10-ի N39–Ա հրամանով ստեղծված աշխատանքային խմբի նպատակների վերաբերյալ՝ կարևորելով 27-րդ հանդիպմանը Հայաստանի պատվիրակության կազմը ներառական մոտեցմամբ ձևավորելու անհրաժեշտությունը:
2) Խորհրդի անդամներին՝ երկամսյա ժամկետում Շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել Ձեր գերատեսչությունների կողմից իրականացվող՝ կլիմայական բաղադրիչ պարունակող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն՝ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի կողմերի 27-րդ

համաժողովին Հայաստանի վերաբերյալ համընդգրկուն ներկայացում պատրաստելու նպատակով:

3) Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին՝ եռամսյա ժամկետում ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի գրասենյակ ներկայացնել «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի կողմերի 27-րդ համաժողովի նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

7. Հաջորդ նիստի անցկացման վերաբերյալ

1) Խորհրդի անդամներին՝ Խորհրդի հերթական նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ եռամսյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել Շրջակա միջավայրի նախարարություն:

2) Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին՝ Խորհրդի նիստերի օրակարգերը ձևավորելիս որպես ելակետ ընդունել Խորհրդի հիմնական նպատակը, այն է՝ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայից և Փարիզյան համաձայնագրից բխող՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների համակարգումը:

ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

01.06.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ